ԴԱՍ 3. ԳԼՈՒԽ 2 — ԵՓԵՍՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԸ

Հայտնություն 2:1-7
Նամակ Եփեսոսին

Նոր կտակարանյան ժամանակաշրջան
New Testament Period

Նոր Կտակարանյան ժամանակաշրջանում Եփեսոսն իր օրերի մեծագույն քաղաքն էր: Քանի որ նավահանգիստը գնալով չէր օգտագործվում, երթևեկությունը փոխվեց դեպի Զմյուռնիա: Եփեսոսն ուսումնառության և մոգության կենտրոն էր. այն աշխարհում ճանաչված էր իր թալիսմաններով, հմայություններով, հուռութքներով և այլն: (Այրելը, Գործք. 19:19):

1. Եփեսոս - «Ցանկալի» կամ «սիրելի»
Ephesus – "Desired One" or "Darling"

2. Քրիստոսի տիտղոսը
Title of Christ

1) Եփեսոսում գտնվող եկեղեցու հրեշտակին գրի՛ր. «Այսպես է ասում Նա, որ Իր աջ ձեռքում յոթ աստղերն է պահում և շրջում է յոթ ոսկե Ճրագակալների (աշտանակների) միջև»:

> Աշտանակը լույսը կրողն է, ոչ թե՝ լույսի աղբյուրը: Յուղը Սուրբ Հոգու խորհրդապատկերն է:

3. Գովասանք
Commendation

1) Գիտեմ **քո գործերը,** 2) և քո աշխատությունը, 3) ու քո համբերությունը, 4) և որ չարերին չես կարող տանել, 5) և փորձել ես նրանց, ովքեր ասում են, թե իրենց **առաքյալ են, բայց չես,** և գտել ես, որ

ստախոս են, 6) և համբերել ես, նեղություններ ես կրել 7) և Իմ անվան համար աշխատել և չես թուլացել:

«**Գիտեմ քո գործերը**». Մաթ. 6:2,5,16-18… «գործ… աշխատանք… համբերություն» Ա Թեսաղ. 1:3

- **Անտեսված առաջնայնություններ**
- **Ստուգող վարդապետություններ – Testing Doctrines**

Պողոսի ողջույնն Ավագներին – Գործք. 20:25-31, 1 Հով. 4:1-3, 2 Հով. 1:7-11

Գործ. 20:25-31 - 25 Եւ հիմա ահա ես գիտեմ, որ իմ երեսն այլ եւս
չէք տեսնի դուք ամենքդ, որ ձեր մէջ ման եկա Աստուծո
արքայութիւնը քարոզելով։ 26 Սորա համար այս օրուա օրը
վկայութիւն եմ դնում ձեզ՝ որ ես ամենիդ արիւնից անմեղ եմ, 27
որովհետեւ չքաշուեցի ձեզ հայտնելու Աստծու կամքը
ամբողջութեամբ։ 28 Արդ զգոյշ կացէք ձեր անձերին՝ ամբողջ
հօտի համար, որի մէջ Սուրբ Հոգին ձեզ վերակացուներ կարգեց,
որ արածեցնէք Աստուծո եկեղեցին, որ իր արիւնովն ստացա։ 29
Որովհետեւ ես գիտեմ, որ իմ հեռանալուց յետոյ յափշտակող
գայլեր կ՚գան ձեր մէջ, որ հօտին չեն խնայի։ 30 Եւ հէնց ձեր միջից
էլ դուրս կը գան մարդիկ, որ ծուռ բաներ կ՚խօսեն, որ
աշակերտներին իրանց ետեւից քաշեն։ 31 Սորա համար արթուն
կացէք, յիշելով որ երեք տարի գիշեր եւ ցերեկ չ՚դադարեցի ամեն
մէկիդ արտասուքով խրատելու։

1 Հով. 4:1-3 - 1 Սիրելիներ, մի՛ հաւատացէք ամէն մի հոգու, այլ
փորձեցէ՛ք հոգիները, թէ արդեօք Աստծո՞ւց են. որովհետեւ շատ
սուտ մարգարէներ են դուրս եկել աշխարհք։ 2 Եւ մենք սրանո՛վ
ենք ճանաչում Աստծու Հոգին. ամէն մի հոգի, որ դաւանում է
Յիսուս Քրիստոսին՝ մարմնով եկած, նա Աստծուց է։ 3 Եւ ամէն մի
հոգի, որ չի դաւանում Յիսուս Քրիստոսին՝ մարմնով եկած, նա

Աստծուց չէ. եւ նա Նեռի հոգին է, որ լսեցիք թէ գալիս է, եւ հիմա արդէն իսկ աշխարհում է։

2 Յով. 1:1,7-11 - 1 Երէցիցս՝ ընտրեալ Տիրուհուն եւ նրա որդիներին, նրան, որին ես սիրում եմ ճշմարտութեամբ. (եւ ոչ միայն ես, այլ այն ամենն էլ որ ճշմարտութիւնը ճանաչել են։)

7 Որովհետեւ շատ մոլորեցնողներ դուրս եկան աշխարհք որ չեն դաւանում Յիսուս Քրիստոսին մարմնով եկած. նա մոլորեցնող է եւ Նեռ։ 8 Զգո՛յշ եղէք ձեր անձերին որ չ՚կորցնենք այն որ վաստակեցինք. այլ որ բոլոր վարձք առնենք։ 9 Ամեն ով որ յանցանք է գործում, եւ չի մնում Քրիստոսի վարդապետութեան մէջ, Աստուած չ՚ունի. ով որ մնում է Քրիստոսի վարդապետութեան մէջ, նա ունի Որդուն էլ Հօրն էլ։ 10 Եթէ մէկը գա ձեզ մօտ եւ այս վարդապետութիւնը չունենա, նրան տուն մի՛ ընդունէք եւ նրան մի՛ ողջունէք։ 11 Ով այդպիսի մէկին ասի՝ ողջո՛յն, մասնակից կը լինի նրա չար գործերին։

Եփ. 4:15 - 15 այլ ճշմարտութեամբ ապրելով սիրոյ մէջ, ամէն բան աճեցնենք նրա՛ մէջ, որ գլուխն է՝ Քրիստոս։

Rather, **speaking the truth in love,** we are to grow up in every way into him who is the head, into Christ,

4. Անհանգստություն
Concern

4) Սակայն քո դեմ մի բան ունեմ՝ քո առաջին սերը թողեցիր։

- protos – առաջինը՝ կարգով, ազդեցությամբ, պատվով. գլխավոր, գերագույն. գերազանց։
  - Եփեսոս – Նվիրում, ոչ թե միայն վարդապետություն
  - Ոչ մի եսասիրություն. «Եթե լեզուներով խոսեմ…» Ա Կորն. 13

- Նամակի գլխավոր թեման. «առաջին սերը»: Նրանք այնքան էին զբաղված Թագավորի գործերով, որ ժամանակ չունեին Թագավորի համար:

Ղուկ. 10:41-42 - 41 Հիսուսը պատասխանեց եւ ասեց նորան. Մարթա, Մարթա, դու հոգս ես քաշում եւ շատ բաներով զբաղուած ես. 42 Բայց մէկ բան է պէտք. Մարիամը բարի բաժինն ընտրեց, որ վեր չի առնուի նորանից։

Ամուսնական առաջին սերը

- Փրկության ուրախությունը. Եր. 2:2, Բ Կորն. 11:2, Ա Հովհ. 4:19

  2 Կոր. 11:2 - 2 Վասնզի ձեզ համար նախանձաւոր եմ Աստուծո նախանձով. որովհետեւ ձեզ մի մարդի նշանեցի՝ որ մի սուրբ կույս կանգնեցնեմ Քրիստոսի առաջին։

  1 Հով. 4:19 - 19 Մենք սիրենք նորան, որովհետեւ առաջ նա սիրեց մեզ։

  Եր. 2:2 - 2 Գնա եւ կանչիր Երուսաղէմի ականջներին եւ ասա. Այսպէս է ասում Տէրը՝ Յիշեցի քեզ համար քո երիտասարդութեան քաղցրութիւնը, քո **հարսնութեան սէրը**, քո իմ ետեւից գալը անապատի մէջ՝ այն չ'սերմուած երկրում։

- Սուրբ Հոգու պտուղներից առաջինը նշված է՝ սեր. Գաղ. 5:22:

- Չորս ծավալային սերը. Եփ. 3:17-19 (116x)

  Եփ. 3:17-19 - 17 Որ Քրիստոսը հաւատքով բնակուի ձեր սրտերումը. Եւ դուք սիրով արմատ գցած եւ հաստատուած լինիք։ 18 Որ ամեն սուրբերի հետ իմանաք, թէ ի՞նչ է լայնութիւնը եւ երկայնութիւնը եւ բարձրութիւնը եւ խորութիւնը. 19 Որ ճանաչէք Քրիստոսի սէրը որ ամեն գիտութիւնից գերազանց է. որ Աստուծոյ ամեն լիութիւնովը լցուիք։

5. Քաջալերանք
Exhortation

5) Ուրեմն հիշի՛ր, թե որտեղից ընկար և **ապաշխարի՛ր** և վերադարձի՛ր քո սկզբնական գործերին, եթե ոչ, շուտով Ես կգամ քեզ մոտ և քո աշտանակը կվերցնեմ իր տեղից, եթե չապաշխարես:

Հիշի՛ր: Ապաշխարի՛ր: Ապաշխարությունը կրկնվում է: Այսօր որտե՞ղ է նրանց ճրագակալը: Նշում. Նա ատում է գործերը, ոչ թե նիկողայոսյաններին:

6) Բայց այս բանն ունիս, որ **Նիկողայոսեանների գործերն** ատում ես, որոնք ես էլ եմ ատում:

Նիկողայոսյաններ – Nicolaitans

- Առաջին դարի աղանդ էր, որոնք համարում էին, որ իրենց կարծիքը առաքելական իշխանություն ուներ:
- Չթարգմանված բա՞ռ է
  - Նիկո Nicao- Հաղթել, նվաճել, իշխել
  - Ղայոս Laos – ժողովուրդ, սովորական մարդիկ
- Պաշտոնը որը ղեկավարում է (ընդդեմ ոտքերի լվացման, Հով. 13):

Նիկողայոս= «յոթից» մե՞կը, ում ընտրեցին՝ վերահսկելու Երուսաղեմի եկեղեցու աղքատներին տրվող «ամենօրյա մատակարարությունը» (Գործք. 6:5): Կոչվում է Նիկողայոս անտիոքցի նորադարձ (մյուս վեցը, հավանաբար, ծնունդով հրեաներ էին):

6. Խոստում հաղթողներին
Promise to the Overcomer

7) Նա, ով հաղթի, նրան թույլ կտամ ուտել կենաց ծառից, որ Աստծո դրախտի մեջտեղում է:

7. Ավարտ
Close

Նա, ով ականջ ունի, թող լսի՛, թե Հոգին եկեղեցիներին ինչ է ասում:

Խրատական մակարդակ (բոլոր եկեղեցիներին)
Admonitory Level (to all churches)

- ✓ Եփեսոս – Նվիրում, ոչ թե միայն վարդապետություն

Անձնական կիրառություն (Հոմոլետիկա)
Personal Application (Homiletics)

- ✓ Եփեսոս – Անտեսված առաջնայնություններ

Խոստում հաղթողներին
Promise to the Overcomer

- ✓ Եփեսոս – Ուտել Կենաց ծառից

Մարգարեական պատկերը
Prophetic Profile

- ✓ Եփեսոսը ներկայացնում է Առաքելական Եկեղեցին:

Հաջորդ դաս

- Կարդա 2-րդ և 3-րդ գլուխները
- Ուրվագծիր Զմյուռնիային ուղղված նամակը
- Հակադրիր Զիթենեաց լեռան քարոզն ըստ Մաթ. 24 և Ղուկ. 21